Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/17265/02/22
2023թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«09» հոկտեմբերի 2023 թվական ք. Երևան

Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահ Գ. Հակոբյանս, ուսումնասիրելով ըստ «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ-ի հայաստանյան մասնաճյուղի (այսուհետ՝ Ընկերություն) հայցի ընդդեմ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Բանկ) և երրորդ անձ «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Կազմակերպություն)՝ գումար բռնագանձելու պահանջի մասին, թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործով ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Չիչոյանի 04.09.2023 թվականի «Քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ» որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Ընկերությունը հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան ընդդեմ Բանկի՝ գումար բռնագանձելու պահանջի մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 09.06.2022 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 05.10.2022 թվականին որոշում է կայացրել Կազմակերպությանը որպես պատասխանողի կողմում վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ ներգրավելու մասին:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Վարդանյանը, պատճառաբանելով, որ «*Տվյալ դեպքում, սույն*

գործով դիմելով դատարան հայցվոր «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊ ընկերություն /Հ/Մ/-ն խնդրել է «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունից բռնագանձել 1 219 424.9 ԱՄՆ դոլար և 3 645 874.83 եվրո գումար որպես բանկային երաշխիքներով վճարման ենթակա գումար: Որպես հիմք նշել է, որ «Սթոնս» ՍՊԸ-ի, «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ ՀՄ-ի և «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ի միջև կնքվել են եռակողմ համաձայնագրեր, որոնց համապատասխան «Սթոնս» ՍՊԸ պայմանագրային պարտավորություններից ծագող պարտքը «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ ՀՄ-ին փոխակերպվում էր «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ ՀՄ և «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ միջև կնքման ենթակա ենթակապալի պայմանագրերի շրջանակներում «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ին վճարված կանխավճարի /տեղի է ունեցել «Սթոնս» ՍՊԸ-ի պարտքի փոխանցում և պահանջի զիջում «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ին/: «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ ՀՄ-ի և «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ի միջև կնքվել են ենթակապալի համաձայանգրեր, որոնց համապատասխան «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ն՝ որպես ենթակապալառու, ստանձնել է կատարել շինարարական աշխատանքներ: Ի ապահովումն ենթակապալի համաձայնագրերով «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ստանձնած պարտավորությունների՝ «Արդշինբանկ» ՓԲԸ-ի կողմից տրվել են բանկային երաշխիքներ: Ըստ հայցի՝ «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ի կողմից ենթակապալի համաձայնագրերով նախատեսված և բանկային երաշխիքներով ապահովված պարտավորությունները տևականորեն չեն կատարվել, ուստի հայցվորը «Արդշինբանկ» ՓԲԸ-ին է ներկայացրել բանկային երաշխիքներով պարտավորությունները կատարելու պահանջ, որոնք մերժվել են /…/: Ըստ «Դատալեքս» տեղեկատվական համակարգի՝ ՀՀ սնանկության դատարանի 2022թ. դեկտեմբերի 23-ի թիվ ՍնԴ/3272/04/22 վճռով «Սթոուն Մայնինգ» ՍՊ ընկերությունը ճանաչվել է սնանկ: Սնանկության վարույթի շրջանակներում, ի թիվս այլ պահանջատերերի, պահանջներ են ներկայացրել ինչպես հայցվոր «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊ ընկերություն /Հ/Մ/-ն, այնպես էլ պատասխանող «Արդշինբանկ» ՓԲ ընկերությունը, որոնք երկուսն էլ վերաբերում են սույն գործով վեճի առարկային՝ երաշխիքների գումարներին կամ դրանից բխող, դրա արդյունքում հնարավոր առաջացող իրավունքներին», գտել է, որ «*Այս առումով, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի և 43-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից և սույն գործի փաստերից հետևում է, որ սույն գործով վեճը և դրա արդյունքում կայացվող դատական ակտը ցանկացած պարագայում ուղղակիորեն ազդելու է սնանկության վարույթի և պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, քանի որ կախված վեճի լուծման արդյունքից՝ կողմերից որևէ մեկի մոտ ծագելու են իրավունքներ /ամբողջությամբ կամ մասնակի, ապահովված կամ չապահովված/, իսկ սնանկ ճանաչված անձի մոտ սնանկության վարույթում առաջանալու են լրացուցիչ պարտականություններ /պահանջատերերի ցուցակում կատարվելու են գրանցումներ/, այսինքն ավելանալու են նոր պահանջներ և պարտատերեր, որոնք ազդելու են պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա*»:

Արդյունքում եզրահանգելով, որ «*սույն քաղաքացիական գործն ամբողջությամբ ենթակա է քննության սնանկության դատարանում, քանի որ վեճը ծագել է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված օբյեկտների առնչությամբ,*

սնանկության գործը դեռևս գտնվում է քննության փուլում և սույն քաղաքացիական գործով վեճի լուծումը ազդելու է պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա, հետևաբար առկա է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ գործն այլ դատարանի քննությանը հանձնելու հիմքը», 04.07.2023 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործը ՀՀ սնանկության դատարանի քննությանը հանձնելու մասին:

ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Չիչոյանը, պատճառաբանելով նաև, որ *«Սույն քաղաքացիական գործով հայցի առարկան «Արդշինբանկ» ՓԲԸ-ից «Սինոհիդրո քորփորեյշն» ՍՊԸ-ի օգտին գումարի բռնագանձման պահանջն է: Վերոնշյալ գործով «Սթոուն Մայնինգ» ՍՊԸ-ն հանդիսանում է պատասխանողի կողմում որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ: (...) Սույն քաղաքացիական գործով պատասխանող է հանդիսանում թիվ ՍՆԴ/3272/04/22 սնանկության գործով պարտատեր «Արդշինբանկ» ՓԲԸ-ն: (...) հայցապահանջի բավարարման պարագայում գումարը պետք է բռնագանձվի «Արդշինբանկ» ՓԲԸ-ից և այդ մասով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն չի կարող լինել»*, ու գտնելով, որ «*քաղաքացիական գործի հայցի առարկայի բնույթը, շոշափող վեճը բացառում է սույն քաղաքացիական գործի քննությունը սնանկության դատարանում*», 04.09.2023 թվականին որոշում է կայացրել թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործի ենթակայության հարցը որոշելու համար գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին:

Թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 04.10.2023 թվականին:

Մինչ թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելը ցանկանում եմ արձանագրել հետևյալը.

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը ***<u>Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին</u>*** ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում ***<u>Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը</u>*** գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը

գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Նշված նորմերի վերլուծությունից բխում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում գործի տարածքային ընդդատությունը կամ ենթակայությունը որոշում է ***Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը***: Ընդ որում, նման որոշում կայացնելու համար անհրաժեշտ պայման է գործը ***հենց Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին*** ուղարկելու մասին որոշման առկայությունը:

Մինչդեռ տվյալ դեպքում ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Չիչոյանը, համաձայն չլինելով գործի ենթակայությանը, որոշում է կայացրել գործը ***Վճռաբեկ դատարանի նախագահին*** ուղարկելու մասին:

Այնուամենայնիվ, գտնում եմ, որ անհրաժեշտ է որոշել թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործի ենթակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը գործը հանձնում է սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության սնանկության դատարանում:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործն ըստ տարածքային ընդդատության կամ սնանկության դատարանից ըստ ենթակայության ստացած դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի տարածքային ընդդատությանը կամ ենթակայությանը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ընդդատությունը կամ ենթակայությունը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ընդհանուր իրավասության դատարանից քաղաքացիական գործ ստանալու դեպքում դատարանը յոթնօրյա ժամկետում որոշում է կայացնում այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը: Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահի որոշած դատարանը համարվում է իրավասու դատարան:

Վերը նշված նորմերի վերլուծությունից բխում է նաև, որ օրենսդիրն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավորներին իրավունք է վերապահել գործն ըստ ենթակայության հանձնելու ՀՀ սնանկության դատարանի քննությանը, եթե գործը քննելիս պարզվել է, որ այն ենթակա է քննության ՀՀ սնանկության դատարանում: Միաժամանակ գործն ըստ ենթակայության ստացած ՀՀ սնանկության դատարանի դատավորը պարտավոր է յոթնօրյա ժամկետում որոշում կայացնել այն վարույթ ընդունելու կամ գործը Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահին ուղարկելու մասին, եթե համաձայն չէ գործի ենթակայությանը: Վերջին դեպքում Վճռաբեկ դատարանի քաղաքացիական պալատի նախագահը գործը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից հնգօրյա ժամկետում որոշում է գործի ենթակայությունը, որի դեպքում որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ինչպես արդեն իսկ վերը նշվեց, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Վարդանյանը, գործը քննելիս պարզելով, որ այն ենթակա է քննության ՀՀ սնանկության դատարանում, գործն ըստ ենթակայության հանձնել է ՀՀ սնանկության դատարանի քննությանը: Գործն ըստ ենթակայության ստացած ՀՀ սնանկության դատարանի դատավոր Ա. Չիչոյանը, համաձայն չլինելով գործի՝ ՀՀ սնանկության դատարանին ենթակայությանը, որոշում է կայացրել գործը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին, որի պայմաններում անհրաժեշտություն է առաջացել որոշելու գործի ենթակայությունը:

Դրանից ելնելով՝ անհրաժեշտ եմ համարում արձանագրել հետևյալը.

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների, երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի, պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած և սնանկ ճանաչելու հարցի լուծման կամ պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդող վեճերով քաղաքացիական գործերը, բացառությամբ կառավարչի կողմից ներկայացվող հայցերով կամ «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման» մասին Հայաստանի Հանրապետության օրենքի հիման վրա ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերի, քննում է սնանկության գործը վարող դատավորը նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործեր (այսուհետ՝ առանձին քաղաքացիական գործեր): Սույն մասով սահմանված՝ պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճը ենթակա է քննության սնանկության դատարանում որպես առանձին քաղաքացիական գործ՝ անկախ պարտապանի սնանկ ճանաչված լինելու հանգամանքից:

Նշված նորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը սպառիչ սահմանել է այն գործերի ցանկը, որոնք սնանկության գործը վարող դատավորը կարող է քննել նույն սնանկության գործի շրջանակում՝ որպես առանձին քաղաքացիական գործ: Այդ գործերն են՝

1) սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառված գույքի և իրավունքների վերաբերյալ վեճերով քաղաքացիական գործերը,

2) երրորդ անձին պատկանող ապահովված իրավունքի առարկայի վերաբերյալ վեճերով քաղաքացիական գործերը,

3) պարտապանի և պարտատիրոջ մասնակցությամբ կնքված, ներառյալ՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճերով քաղաքացիական գործերը:

Ընդ որում, վերը նշված թվով երեք տեսակի գործերից յուրաքանչյուրի դեպքում անհրաժեշտ պայման է վեճի հետևանքով պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա ազդեցություն ունենալը:

Նշված գործերից բացառություն են կազմում միայն կառավարչի կողմից ներկայացվող հայցերով հարուցվող քաղաքացիական գործերը:

Տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործի ենթակայության մասին վեճը լուծելու համար վերը նշված նորմատիվ իրավական ակտերի համատեքստում անհրաժեշտ է պարզել հետևյալ հարցը՝

արդյո՞ք սույն գործը «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է այդ հոդվածին համապատասխանող:

Դրանից ելնելով՝ անհրաժեշտ եմ համարում պարզել սույն գործով հայցի առարկան և հիմքը: Այսպես՝

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի իմաստով հայցի առարկան հայցվորի կողմից պատասխանողին ուղղված նյութաիրավական պահանջն է, իսկ հայցի հիմքը՝ հայցի հիմքում դրված փաստերն են, այսինքն՝ այն հանգամանքները, որոնց հետ նյութական իրավունքի նորմը կապում է իրավահարաբերությունների առաջացումը, փոփոխումը կամ դադարումը:

Տվյալ դեպքում սույն քաղաքացիական գործով հայցի առարկան Ընկերության կողմից Բանկին ուղղված՝ գումար բռնագանձելու մասին նյութաիրավական պահանջն է, որի հիմքում դրված փաստերի համաձայն՝ Բանկը գրավոր պարտավորություն է ստանձնել Կազմակերպության պարտատիրոջ՝ Ընկերության հանդեպ, երաշխիքով ստանձնած պարտավորության պայմաններին համապատասխան, վերջինիս կողմից գրավոր պահանջ ներկայացնելու դեպքում նրան վճարել դրամական գումար, մինչդեռ Բանկը, ստանալով նման պահանջ, Ընկերության այդ պահանջը մերժել է:

Թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործի ենթակայությունը որոշելիս պարզվեց, որ Կազմակերպությունը ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դիմումի հիման վրա հարուցված թիվ ՍնԴ/3272/04/22 սնանկության գործով ՀՀ սնանկության դատարանի 23.12.2022 թվականի վճռով ճանաչվել է սնանկ, հաստատվել է պահանջների վերջնական ցուցակը, իսկ Բանկի կողմից 1.219.424,9 ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամի և 3.645.874,83 եվրոյին համարժեք ՀՀ դրամի չափով գրավով ու երաշխավորությամբ ապահովված պահանջների մասով սնանկության գործի վարույթը

կասեցվել է մինչև սույն՝ թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործով եզրափակիչ դատական ակտ կայացնելը:

Անդրադառնալով այն հարցին, թե արդյո՞ք սույն գործը «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածի իմաստով հանդիսանում է այդ հոդվածին համապատասխանող, անհրաժեշտ եմ համարում արձանագրել, որ հիմք ընդունելով սույն գործով ներկայացված հայցադիմումում նշված հայցի առարկան և հայցի հիմքերը, սույն քաղաքացիական գործի նյութերը, թիվ ՍՆԴ/3272/04/22 սնանկության գործով «www.court.am» դատական իշխանության պաշտոնական կայքում առկա տեղեկատվությունը՝ սույն գործը հանդիսանում է «Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4-րդ հոդվածին համապատասխանող գործ, քանի որ տվյալ դեպքում միաժամանակ առկա են այն այդպիսին համարելու՝ վերը նշվածով հոդվածով նախատեսված պարտադիր երկու պայմանները՝ գործը պարտապան Կազմակերպության և որպես պարտատեր իր պահանջը գրանցելու մասին պահանջ ներկայացրած Բանկի մասնակցությամբ կնքված՝ պարտավորությունների կատարման ապահովման միջոցների պայմանագրերի առնչությամբ ծագած վեճի վերաբերյալ է, ու այդ վեճը կարող է ազդել վերը նշված սնանկության գործով գրանցված պարտատերերի պահանջների բավարարման հնարավորության վրա:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործով իրավասու դատարան է հանդիսանում ՀՀ սնանկության դատարանը, որի պայմաններում գործը ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով և «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործը ենթակա է ՀՀ սնանկության դատարանին:

2. Սույն որոշումը և թիվ ԵԴ/17265/02/22 քաղաքացիական գործի նյութերն ուղարկել ՀՀ սնանկության դատարան:

3. Որոշման օրինակն ուղարկել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան:

ՀՀ վճռաբեկ դատարանի
քաղաքացիական պալատի նախագահ **ԳՈՌ ՀԱԿՈԲՅԱՆ**